Ժ.

Ծօ՛, այս մութ ու մլար տարիս՝ քեշկէ չէր բերեր մարընն զիս.
Եբեր սիրու տէր արաւ, ու եդիր զընճիլն ի ճընտիս.
Թէ քաշեմ նա ցաւ կուտայ, եւ թէ չէ նա կ'ելնէ հոգիս:

ԺԱ.

Ա՛յ իմ քեաֆուրի քեաֆիր, մի՛ վառիր առջեւ քեաֆիրի.
Քան զկընթղայ ի լի կեցիր, մի՛ ճապղիլ ամէն ճեհիլի.
Ձէտ վարդ, զէտ մուրտ մի՛ լինիր, որ ամէն փողոցք նա բուսնի.
Նունուֆար ծաղիկ եղիր, որ ծովուն յատակն երեւի:
Հազար աչք ի քեզ հայի, հազար ձեռք ի քեզ չընհասնի.
Քո սէրդ է ի ծով նըման, լողալով սիրուդ չընհասնի:

ԺԲ.

Աւա՛ղ ու հազար աւա՛ղ, որ գայլուն բախտովն եմ եղեր.
Սովուն չեմ կարեր քայլել, նա կ'ասեն թէ զառ մ'է կերեր:
Սիրու երես չեմ տեսեր, կու ասեն թէ ծոցն է օթեր.
Ձէտ զիս զընրաբախտ մանուկ չեմ մընար թէ մարն է բերել:

ՔՍԱՆԵԻՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ, ուր տեսնամ աղուոր նա սիրեմ.
Թէ զյաւիտենից պատճառն եմ ուսել, ես երթամ ասեմ.
Ձաղէկն այլ ի գիրկս առնեմ 'ւ Աստուծոյ երթամ ցընցընեմ,
«Ձաղէկընն դու ստեղծեցիր, ինձ է՞ր մեղք դընես թէ սիրեմ»:

Բ.

Նաղաշ մ'ընզղէլէմն առեր՝ լուք զսուրաթ ի թուղթն է գընրել.
Ձէտ որ ի յուներն ելեր, նա ինկեր նաղաշն ու թալցեր:
Մէկ մ'ընզնաղաշին նաղշածն է տեսեր ու հէյրան եղեր.
Ես զիմ Աստուծոյ ստեղծածն եմ սիրել 'ւ ի ճօշք են առել:

Գ.

Հայրէն մի կամիմ ասել որ լընսեն քարերն անդընդոց,
Ամէնն ի եարի ճօթէն որ նընստել է ի գիրկն այլոց.
Ասիր դու ի քո մընտին թէ՝ «Սիրեմ զիմընն ու զայլոց».